Կարգապահական գործ թիվ ԿԳ-20180

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի ապրիլի 06-ի թիվ 263-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/157-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մանե Կարապետյանի, Մարինե Ֆարմանյանի, Հարություն Հարությունյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի և Արսեն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին (արտոնագիր՝ 2004) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ազատ Դունամալյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանը **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** թիվ ԿԴ2/1023/02/20 քաղաքացիական գործով 22.07.2020թ. 16:30-ին նշանակված նախնական դատական նիստի ժամանակ դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք՝ արտաբերելով հետևյալ արտահայտությունները. *«...և նաև Ձեր նման դատավորներին պետք է մաքրել էս շենքերից, պետք է մաքրել ձեր նման դատավորներին, մաքրել էս զիբիլը դատարաններից: Մենք դա անելու ենք, և ես նաև Ձեր ու Ձեր վարքագիծը հանրային քննարկման առարկա եմ դարձնելու: Մեր երկրի քաղաքական իշխանությունը վերջապես պետք է էնպիսի անձանց նշանակի էս աթոռներին, որոնք իրենց բարոյական վարքագծով, իրենց մարդկային որակներով պետք*

է համապատասխանեն իրենց կարգավիճակին:»:

Դիմողը նշել է, որ դատական նիստի ընթացքում փաստաբանի վերոնշյալ վարքագիծն արձանագրվել է դատական նիստի դահլիճում տեղադրված հատուկ համակարգչային ձայնագրման միջոցով:

Այնուհետև դատական նիստից դուրս փաստաբան Տիգրան Սարգսյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում շարունակել է վիրավորական արտահայտություններ կատարել Դիմողի հասցեին: Մասնավորապես, նշյալ սոցիալական ցանցի իր էջում հրապարակելով դատական նիստն ավարտելուց հետո Դիմողի հետևից արված լուսանկարը՝ Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. *«Դահլիճից փախնող դատավոր տեսա՞ծ կաք. Բարոյախրատական ճառիցս հետո... Խղճում եմ ձեզ, գնացեք ուրիշ գործով զբաղվեք...Սերժի կադրերը...Փաստաբան Տիգրան Սարգսյան»:*

Հաջորդիվ նշված գրառման մեկնաբանություններում Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. *«...Ինքը իր վատ վերաբերմունքով ինձ ստիպեց իրեն բաներ ասել, որոնք ինքը միշտ կհիշի: Հարգիր, որ հարգվես, եթե սա չգիտես, գնա խոզ պահի ու հետը խոխոռա:»:*

Կրկին նույն հրապարակման մեկնաբանություններում Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. «*Սերժի կադրը չի, սխալվել եմ: Նոր է նշանակվել ու նախկին փաստաբան է, բայց թե ինչի է փաստաբանի նկատմամբ նման չարությամբ լցված չհասկացա: Բանկերին սպասարկող իրավաբան է եղել: Հուսամ իմ այսօրվա դասը նրան օգտակար կլինի իր հետագա գործունեության համար»:* Սույն գրառման հետ միաժամանակ Տիգրան Սարգսյանը հրապարակել է Դիմողի կենսագրությունը՝ վերցված www.court.am կայքից և Դիմողի լուսանկարը:

Դիմողը առաջարկել է միջոցներ ձեռնարկել փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ուղղությամբ:

Դիմումը փոստի միջոցով ստացվել է 27.07.2020թ., որին կից ներկայացվել է դատական նիստի արձանագրության 2 կրիչ և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից կատարված քաղվածքը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 24.08.2020թ. թիվ 327-Ա/ԿԳ-20180 որոշման հիման վրա փաստաբան Տիգրան Սարգսյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

02.09.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Կարեն Քամալյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

<u>3.2 Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

<u>3.3 Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:</u>

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 02.10.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբանն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 06.11.2020թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 06.04.2021թ. ժամը 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ԿԴ2/1023/02/20 քաղաքացիական գործով 22.07.2020թ. 16:30-ին նշանակված նախնական դատական նիստի ժամանակ դատարանի նկատմամբ արտաբերել է հետևյալ արտահայտությունները. «...և նաև Ձեր նման

դատավորներին պետք է մաքրել էս շենքերից, պետք է մաքրել ձեր նման դատավորներին, մաքրել էս զիբիլը դատարաններից: Մենք դա անելու ենք, և ես նաև Ձեր ու Ձեր վարքագիծը հանրային քննարկման առարկա եմ դարձնելու: Մեր երկրի քաղաքական իշխանությունը վերջապես պետք է էնպիսի անձանց նշանակի էս աթոռներին, որոնք իրենց բարոյական վարքագծով, իրենց մարդկային որակներով պետք է համապատասխանեն իրենց կարգավիճակին:»: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացրած դատական նիստերի համակարգչային ձայնագրության միջոցով:*

2. Փաստաբան Տիգրան Սարգսյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում վիրավորական արտահայտություններ է կատարել Դիմողի հասցեին: Մասնավորապես, նշյալ սոցիալական ցանցի իր էջում հրապարակելով դատական նիստն ավարտելուց հետո Դիմողի հետևից արված լուսանկարը՝ Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. *«Դահլիճից փախնող դատավոր տեսա՞ծ կաք. Բարոյախրատական ճառիցս հետո... Խղճում եմ ձեզ, գնացեք ուրիշ գործով զբաղվեք...Սերժի կադրերը...Փաստաբան Տիգրան Սարգսյան»: Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված www.facebook.com սոցիալական կայքում փաստաբանի կողմից կատարված հրապարակումները և մեկնաբանությունները հաստատող նկարներով:*

3. Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. *«...Ինքը իր վատ վերաբերմունքով ինձ ստիպեց իրեն բաներ ասել, որոնք ինքը միշտ կհիշի: Հարգիր, որ հարգվես, եթե սա չգիտես, գնա խոզ պահի ու հետը խոխոռա:»: Սույն փաստը հաստատվում է www.facebook.com սոցիալական կայքում փաստաբանի կողմից կատարված հրապարակումները և մեկնաբանությունները հաստատող նկարներով:*

4. Տիգրան Սարգսյանը կատարել է հետևյալ գրառումը. «*Սերժի կադրը չի, սխալվել եմ: Նոր է նշանակվել ու նախկին փաստաբան է, բայց թե ինչի է փաստաբանի նկատմամբ նման չարությամբ լցված չհասկացա: Բանկերին սպասարկող իրավաբան է եղել: Հուսամ իմ այսօրվա դասը նրան օգտակար կլինի իր հետագա գործունեության համար»:* Սույն գրառման հետ միաժամանակ Տիգրան Սարգսյանը հրապարակել է Դիմողի կենսագրությունը՝ վերցված www.court.am կայքից և Դիմողի լուսանկարը: *Սույն փաստը հաստատվում է www.facebook.com սոցիալական կայքում փաստաբանի կողմից կատարված հրապարակումները և մեկնաբանությունները հաստատող նկարներով:*

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 28.11.2015թ., և 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ երկու անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը), որոնք կարճվել են:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Սարգսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ:

7.1 Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման մասով

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

7.1.1 ***Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:***

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը***

միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով[2]:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և **<u>փաստաբանի վարքագծի կանոնագրքի</u>** <u>պահանջները խախտելու համար</u>.....:*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **<u>այլոց պատվի ու բարի համբավի</u>** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **<u>պաշտպանության նպատակով</u>**:*

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **<u>որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում</u>**՝ <u>ի շահ</u> պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, <u>ինչպես և այլ անձանց հեղինակությունը</u> կամ իրավունքները <u>պաշտպանելու</u>, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության*

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:
[2] Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:[3]

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[4] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***<u>որոնք նախատեսված են օրենքով</u>***» հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **<u>փաստաբանության</u>** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **<u>փաստաբանների մասնագիտական միավորում է,</u>** որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին

---

[3] CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

[4] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

հանդիսացող Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[5]*:*

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի***[6] ***կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***<u>նպաստել</u>*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական*

[5] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, ***<u>եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը</u>****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը*[7]*:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. "Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի հեղինակությունը:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 Արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում այնպիսի

[7] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Սույն ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում:

Տվյալ պարագայում փաստաբանը դատական նիստի ժամանակ բացահայտ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել դատարանի նկատմամբ և ակնհայտորեն վիրավորել է գործը քննող դատավորին, ինչից հետո էլ սոցիալական ցանցով շարունակել է բացահայտ վիրավորել դատավորին և փաստաբանին ոչ հարիր վարքագիծ դրսևորել:

Վերոգրյալից հետևում է, որ Փաստաբանի վարքագիծը կարող է որակվել, որպես դատարանի բարի համբավը արատավորող, ինչը կասկածի տակ է դնում փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը և հարիր չէ փաստաբանական գործունեությանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջները:

7.2 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող*

կանոններին, ***<u>այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին</u>*** *և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:*

Կանոնագրքի 4.1 կետը հստակ սահմանում է փաստաբանների պարտականությունը հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Դատական նիստի ժամանակ իր թույլ տված արտահայտություններով և դատարանին ուղղված վարքագծով, փաստաբանն ակնհայտորեն անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ և թիրախավորել է վերջինիս, ինչից հետո էլ շարունակել է վիրավորել դատավորին սոցիալական ցանցում կատարված անհարգալից և փաստաբանին ոչ հարիր գրառումներով:

Փաստաբաններն ազատ են դատավորի գործողությունների դեմ իրենց դիրքորոշումը հայտնելու հարցում, սակայն այն պետք է ուղղված լինի բացառապես վստահորդի շահերի պաշտպանությանը՝ զերծ վիրավորական կամ ոչ կոռեկտ ձևակերպումներից:

Դատարանի առջև փաստաբանի վարքագծի վերաբերյալ սկզբունքներն ամրագրված են նաև Փաստաբանի գործունեության իրականացման ազատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 25.10.2000թ. N Rec/2000/21 հանձնարարականում, մասնավորապես՝ երրորդ սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պետք է հարգի դատական իշխանությունը և դատարանի առջև իր պարտականություններն իրականացնի այնպես, որպեսզի համապատասխանի ազգային իրավական և այլ կանոններին և մասնագիտական չափորոշիչներին:

Վերոգրյալ իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ Կանոնագիրքը դատարանում գործի քննությանը մասնակցելիս փաստաբանի համար նախատեսել է դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին ենթարկվելու, այդ թվում՝ դատավորին հարգանքով վերաբերվելու պարտականություն, սակայն այդ կանոններին ենթարկվելու պարտականությունն ամենևին չի ենթադրում փաստաբանի՝ դատավորի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու սահմանափակ հնարավորություն ունենալու հանգամանքը:

******

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին: Այսինքն՝ Փաստաբանի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Փաստաբանի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի որևէ դրույթի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին, Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը դրսևորել է համապատասխան վարքագիծը դիտավորությամբ, քանի որ Փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

8. Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 2004) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 2004) կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Տիգրան Աշոտի Սարգսյանին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

06 ապրիլի 2021թ.
թիվ ԿԳ/157-Ա
ք. Երևան